ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/69

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Վիոլա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3389-2020 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 28.02.2020թ. V02.4/[20798]-20 գրության հիման վրա, 05.03.2020թ.-ին «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 05.03.2020թ.-ին:

06.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/69 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

16.03.2020թ.-ին, 24.03.2020թ.-ին և 03.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.04.2020թ.-ին:

2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 28.02.2020թ. V02.4/[20798]-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2020 թվականի փետրվարի 10-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով բժշկական գործիքների և պարագաների գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ են ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊ և «ՈԻնիվերսալ Հոսպիտալ Պրոդակտ» ՍՊ ընկերությունները: Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի

24-ի 2-րդ նիստի 3-րդ որոշմամբ, ի թիվս մի շարք այլ մասնակիցների, «Վիոլա» ՍՊ և «ՈԻնիվերսալ Հոսպիտալ Պրոդակտ» ՍՊ ընկերություններին ևս առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել հայտով ներկայացված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունների շտկում՝ հրավերի պահանջների նկատմամբ: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին փետրվարի 25-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատաս-խանությունները, սակայն «Վիոլա» ՍՊ ընկերության 53-րդ չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին, իսկ «ՈԻնիվերսալ Հոսպիտալ Պրոդակտ» ՍՊ ընկերությունը առհասարակ չի շտկել անհամապատասխանությունները և չի ներկայացրել ոչ մի փաստաթուղթ:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով է «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 27-ի 3-րդ նիստի 2-րդ որոշմամբ «Վիոլա» ՍՊ ընկերության 53-րդ չափաբաժինը և «ՈԻնիվերսալ Հոսպիտալ Պրոդակտ» ՍՊ ընկերության հայտը մերժվել է՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

«Վիոլա» ՍՊ և «ՈԻնիվերսալ Հոսպիտալ Պրոդակտ» ՍՊ ընկերությունների տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, Ձեզ ենք տրամադրում «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի խնդրահարույց 3-րդ, 53-րդ և 55-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը պարունակող քաղվածքը /ամբողջական հրավերը տեղադրված է www.gnumner.am կայքում/, ընթացակարգի մասնակիցներ «Վիոլա» ՍՊ և «ՈԻնիվերսալ Հոսպիտալ Պրոդակտ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու հայտերը և «Վիոլա» ՍՊ ընկերության շտկված տեխնիկական բնութագիրը, ընթացակարգի արձանագրությունների պատճենները:»:

3. <u>«Վիոլա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վիոլա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3389-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 24.03.2020թ.-ին հրավիրված նիստին՝ ներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

Ներկայացված դիրքորոշմամբ Մասնակցի ներկայացուցիչները հայտնել են հետևյալը.

«• Գործի նախապատմությունը և փաստերը.

✓ ”Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան” հիմնադրամի կարիքների համար հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

✓ «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 53-րդ չափաբաժնի համար Հրավերի տեխնիկական բնութագրով, ի թիվս այլ պահանջների, սահմանվել է հետևյալ պահանջը՝ SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսապիչի համար SONY UPP-210HD կամ համարժեք թուղթ: Թղթե սպիտակ ռուլոն 210մմ x 25մ չափսի:

✓ «Վիոլա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել տվյալ ընթացակարգին և 53-րդ չափաբաժնի մասով ներկայացրել հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսապիչի համար SONY UPP-210HD համարժեք թուղթ…:

✓ Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.22 կետի՝ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ում 53-րդ չափաբաժնում հստակ չէ թղթի տեսակը:

✓ Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2020թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 4-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել “ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ” ծածկագրով գնման ընթացա-կարգի նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակից-ներին՝ առաջարկելով միչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունները:

✓ Կատարելով համապատասխան շտկումը՝ «Վիոլա» ՍՊԸ-ն 53-րդ չափաբաժնի մասով նշել է թղթի տեսակը՝ ներկայացնելով ՕՕՕ “БалтПапир” արտադրողի 210մմ*25մ HD տեսապիչի թուղթը: Մասնավորապես, շտկված հավելված 1.1.-ով (կցվում է) ՍՊԸ-ն 53-րդ չափաբաժնի մասով ներկայացրել է հետևյալը. «SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսապիչի համար AS60KT-LF 210մմ*25մ HD թուղթ:

✓ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2020թ.տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Վիոլա» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 53-րդ չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, քանի որ ՕՕՕ “БалтПапир” արտադրողի 210մմ*25մ HD տեսապիչի թուղթը համատեղելի չէ հրավերում նշված SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսապիչի հետ և նույն արձանագրության 2-րդ կետով որոշել է մերժել «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) Հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է

առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիր¬վում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) Շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) Չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 3.22 կետի՝ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ: Ընդ որում, արձանագրության մեջ հստակ անհամապատասխանություններ արձանագրելու փոխարեն ամրագրվել է ընդամենը հետևյալը՝ Հավելված 1.1-ում 53-րդ չափաբաժնում հստակ չէ թղթի տեսակը:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել “ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ” ծածկագրով գնման ընթացակարգի նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին առաջարկելով միչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով «Վիոլա» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցմամբ (կցվում է) հայտնել է հետևյալը.

«Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ում 53-րդ չափաբաժնում հստակ չէ թղթի տեսակը:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել է հրավերի պահանջների նկատմամբ իր համար ընկալելի բոլոր անհամապատասխանությունները՝ թղթի բնութագրում ավելացնելով դրա մանրամասն մակնշումը արտադրողի կողմից, և շտկում կատարելու փաստը հաստատվել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.02.2020թ. թիվ 3 արձանագրությամբ:

*27.02.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Վիոլա» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 53-րդ չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, քանի որ ՕՕՕ “БалтПапир” արտադրողի 210մմ*25մ HD տեսատպիչի թուղթը համատեղելի չէ հրավերում նշված SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի հետ և որոշել մերժել «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը:*

Մինչդեռ՝ Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ավելին, Կարգի 46-րդ կետը հստակ պահանջում է, որպեսզի տեխնիկական բնութագրում անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվեն հայտնաբերված անհամապատասխա-նությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ

կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշված փաստական հանգամանքների ուսումնասիրությունից այդպես էլ անհասկանալի է մնում, թե գնահատող հանձնաժողովի կողմից «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը մերժելիս՝ հրավերի պահանջների նկատմամբ կոնկրետ ինչ անհամապատասխանություններ են արձանագրվել և չհիմնավորված, միայն վերացական նշվել է, որ թուղթը անհամատեղելի է նշված տպիչի հետ: Բայց թե այդ եզրահանգումը ինչով է հիմնավորված և ինչ փաստերի հիման վրա է արվել, այդպես էլ մնում է անորոշ և միայն ենթադրությունների տեղիք տալիս:

Վերոհիշյալի արդյունքում անկհայտորեն խախտվել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սահմանադրական սկզբունքները (այդ մասին ավելի մանրամասն տե՛ս՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 18.04.2006թ. թիվ ՍԴՈ-630, 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 և 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշումները), քանի որ Ընկերության համար նման բովանդակությամբ մերժում ստանալիս՝ անհասկանալի և ոչ որոշակի է եղել, թե 53-րդ չափաբաժնով հայտը մերժելու հիմքում ինչ փաստեր են դրված:

*Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն եմ հրավիրում, որ ի պատասխան «Վիոլա» ՍՊԸ-ի հարցման՝ ООО "БалтПапир" ընկերությունը 16.03.2020թ. թիվ 123В/3 գրությամբ /կցվում է/ հաստատել է, որ 3004 արտիկուլի 210մմ*25մ HD տեսատպիչի թուղթը համատեղելի է SONY տեսատպիչների հետևյալ մոդելների հետ. UP-980, UP-960, UP-930, UP-910, UP-970AD, UP-990 AD:*

*ООО "БалтПапир" ընկերության կայքէջի ուսումնասիրությունը նույնպես ցույց է տալիս, որ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից առաջարկված 3004 արտիկուլի 210մմ*25մ HD թուղթը համատեղելի է SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի հետ /տես՝ http://baltpaper.ru/cat/bumaga-dlya-uzi/21025-lenta-registriruyushchaya-dlya-videoprinterov-vysokaya-plotnost/:*

Այս պայմաններում մնում է անհասկանալի և ոչ հիմնավոր գնահատող հանձնաժողովի որոշումը՝ «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը 53-րդ չափաբաժնի մասով մերժելու

*վերաբերյալ այն հիմնավորմամբ, որ ՕՕՕ “БалтПапир” արտադրողի 210մմ*25մ HD տեսատպիչի թուղթը իբրև թե համատեղելի չէ հրավերում նշված SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի հետ:*

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցեցրել է «Վիոլա» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել տասնյակ տարիների փորձ ունեցող հեղինակավոր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են «Վիոլա» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2020/69 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով 10.02.2020թ-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 53-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ *«SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի համար SONY UPP-210HD կամ համարժեք թուղթ: Թղթե սպիտակ ռուլոն 210մմ x 25մ չափսի: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության*

ժամկետի առնվազն 1/2-րդը: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE կամ համարժեք սերտիֆիկատի/ների առկայությունը պարտադիր է:»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վիոլա» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 53-րդ չափաբաժնի համար առաջարկել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
53	Տեսատպիչի թուղթ 210մմ x 25մ	ООО “БалтПапир”	ООО “БалтПапир” Ռուսաստանի Դաշնություն	SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի համար **SONY UPP-210HD համարժեք թուղթ:** Թղթե սպիտակ ռուլոն 210մմ x 25մ չափսի: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամաբ: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետը կլինի 1/2-րդը: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար կլինի ГОСТ Р սերտիֆիկատի առկայություն

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.02.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 3.22 կետի համաձայն՝ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ում 53-րդ չափաբաժնում հստակ չէ թղթի տեսակը:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.9-րդ կետի պահանջները, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված հետևյալ տարբերակը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
53	Տեսատպիչի թուղթ 210մմ x 25մ	ООО “БалтПапир”	ООО “БалтПапир” Ռուսաստանի Դաշնություն	SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի համար **AS60KT-LF 210x25HD:** Թղթե սպիտակ ռուլոն 210մմ x 25մ չափսի: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամաբ: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետը կլինի 1/2-րդը: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար կլինի ГОСТ Р սերտիֆիկատի առկայություն

Հանձնաժողովի 27.02.2020թ.-ի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Վիոլա» ՍՊ ընկերությունը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 53-րդ չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, քանի որ ООО «БалтПапир» արտադրողի 210մմx25մ HD տեսատպիչի թուղթը համատեղելի չէ հրավերում նշված SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի հետ:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը՝ 53-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3389-2020 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն հրավերի 2-րդ մասի 2.2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված թիվ 1.1-ի:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով 10.02.2020թ-ին հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 53-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ *«SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսապպիչի համար SONY UPP-210HD կամ համարժեք թուղթ: Թղթե սպիտակ ռուլոն 210մմ x 25մ չափսի: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE կամ համարժեք սերտիֆիկատի/ների առկայությունը պարտադիր է:»:*

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վիոլա» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 53-րդ չափաբաժնի համար առաջարկել է հետևյալը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
53	Տեսատպիչի թուղթ 210մմ x 25մ	ՕՕՕ “БалтПапир”	ՕՕՕ “БалтПапир” Ռուսաստանի Դաշնություն	SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի համար **SONY UPP-210HD համարժեք թուղթ:** Թղթե սպիտակ ռուլոն 210մմ x 25մ չափսի: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամաբ: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետը կլինի 1/2-րդը: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար կլինի ГОСТ Р սերտիֆիկատի առկայություն

Հանձնաժողովի 24.02.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 3.22 կետի համաձայն՝ «Վիոլա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ում 53-րդ չափաբաժնում հստակ չէ թղթի տեսակը:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.9-րդ կետի պահանջները, Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը ներկայացրել է արձանագրված անհամապատասխանության շտկված հետևյալ տարբերակը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը

53	Տեսատպիչի թուղթ 210մմ x 25մ	ООО “БалтПапир”	ООО “БалтПапир” Ռուսաստանի Դաշնություն	SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի համար **AS60KT-LF 210x25HD:** Թղթե սպիտակ ռուլոն 210մմ x 25մ չափսի: Նոր է, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամաբ: Հանձնելու պահին ամբողջ պիտանելիության ժամկետը կլինի 1/2-րդը: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար կլինի ГОСТ Р սերտիֆիկատի առկայություն

Հանձնաժողովի 27.02.2020թ.-ի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Վիոլա» ՍՊ ընկերությունը շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 53-րդ չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, քանի որ ООО «БалтПапир» արտադրողի 210մմx25մ HD տեսատպիչի թուղթը համատեղելի չէ հրավերում նշված SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի հետ:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը՝ 53-րդ չափաբաժնի մասով հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բժշկական գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովի 27.02.2020թ.-ի թիվ 3 արձանագրությամբ արձանագրված ООО «БалтПапир» արտադրողի 210մմx25մ HD տեսատպիչի թղթի՝ հրավերում նշված SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի հետ անհամատեղելի լինելու հանգամանքը չի հիմանավորվում որևէ փաստական տվյալով: Այն չի կարող օբյեկտիվորեն թույլ տալ եզրահանգելու, որ Մասնակցի կողմից թիվ 1.1 Հավելվածով ներկայացված ООО «БалтПапир» արտադրողի 210մմx25մ HD տեսատպիչի թուղթն անհամատեղելի է հրավերում նշված SONY HYBRID GRAPHIC PRINTER UP-970 AD տեսատպիչի հետ:

Վերոնշյալ փաստական հանգամանքների առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ հետագայում (սույն ընթացակարգի քննության ժամանակ) փաստելու կամ հերքելու Հանձնաժողովի եզրահանգումը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների

իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այն դեպքում, երբ Հանձնաժողովը մասնակցի ներկայացրած տվյալների իսկության նկատմամբ հիմնավոր կասկած ունենալու դեպքում կարող էր ստուգել դրանք՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ՝ ղեկավարվելով Կարգի 67-րդ կետի դրույթներով սահմանված պահանջներով, որը սույն դեպքում տեղի չի ունեցել:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վիոլա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին Հանձնաժողովի կողմից 27.02.2020թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումն ոչ իրավաչափ է, չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված սկզբունքներից և պահանջներից: Նման պայմաններում չի կարող առաջանալ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների խախտում, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի, վերոնշյալներով պայմանավորված, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3389-2020 գրությամբ «Վիոլա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/69 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ